


L. L. Kieym

Quebec Egg





ՄԻԶԻՆ ՅԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ
ՅԵՐԵԽԱՆԵՐԻ Հ Ա. Մ. Ա. Ր

891.715
L-41

Ն. ԼԵՍԿՈՎ

284

Գ Ա Զ Ա Ն Ը

15.108

ՎԵՐԱՌԵԱԿՈՒԹՅԱՆ
Ն. ԺԲԱՆԿՈՎԱՅԻ

Նկարները Բ. ԿՈՒՍԱԴԱՆԻ

Թարգմ. Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1935

20 MAY 2013

3459

Պատ. Խմբագիր Ա. Հայրյան
Տեխնիկական խմբագիր Հ. Տեր-Դավթյան

Դ 1 ա վ 1 ի տ 84
Հրատար. № 3224
Տիրած 5000



36643-62

Հանձ. ե արտ. 20/II Ստորագրված ե տպելու 26/III-35

Ստատֆորմատ ԲԲ 125x176 պատվիր № 1058

Տիպոգրիա նմ. Ստահ 1902 թ. ԱԿԿՊԴ Ռոտ նա-Դոնու.

I.

Հայրս իր ժամանակին հայտնի քննիչ եր: Նրան
բազմաթիվ կարևոր գործեր ելին հանձնարարում,
և այս պատճառով նա հաճախ բացակայում եր
ընտանիքից, իսկ տանը մնում ելինք մայրս, յեւ
և ծառաները:

Մայրս այն ժամանակ դեռ շատ ջահել եր,
իսկ յես՝ փոքրիկ տղա ելի:

Այն դեպքի ժամանակ, վորի մասին այժմ ու-
զում եմ պատմել, յես ընդամենը միայն հինգ
տարեկան ելի:

Զմեռ եր, և շատ դաժան ձմեռ: Այնպիսի
ցրտեր եր անում, վոր վոշարները ձմեռը սառ-
չում ելին գոմերում, իսկ ճնճղուկներն ու մոխ-
րագույն աղուամբները փայտանում ընկնում ելին
սառած գետնի վրա: Հայրս այդ ժամանակ իր
պաշտոնական գործերով գտնվում եր Ցելեցում

և չեր խոստանում տուն գալ նույնիսկ Շննդին.
այս պատճառով մայրս ինըն եր պատրաստվում
նրա մոտ գնալու, վորպեսզի տոներին նրան մե-
նակ չժողնի: Դաժան ցրտերի պատճառով մայրս
ինձ հետը շտարավ այդ յերկար ճանապարհը, այլ
թողեց իր քրոջ մոտ: Մորաքըռչս ամուսինը, վորն
Որլովի կալվածատերերից մեկն եր, տիտուր համ-
բավ ուներ: Նա շատ հարուստ եր, ծեր ու գա-
ժան: Նրա ընավորության մեջ գերակշռում եյին
չարությունն ու անողոքությունը, և նա ամենեին
չեր ափսոսում, վոր այսպես ե, այլ, ընդհակա-
ռակը, նույնիսկ պարծենում եր այդ հատկա-
թյուններով, վորոնք, նրա կարծիքով, իբրև թե
արտահայտում եյին իր առնական ուժն ու ան-
դրդվելիորեն հաստատ վողին:

Նա հենց այսպիսի արիություն և հաստատա-
մություն եր ձգտում զարգացնել իր զավակների
մեջ, վորոնցից մի տղան ինձ հասակակից եր:

Բոլորը վախենում եյին փեսայիցս, իսկ յես
ամենից ավելի եյի վախենում, վորովհետև նա իմ
մեջ ել եր ուզում «արիություն զարգացնել», և
մի անգամ, յերբ յես յերեք տարեկան եյի, և
դուրս սարսափելի փոթորիկ եր, վորից յես շատ
եյի վախենում, նա ինձ մնակ դուրս հանեց

պատշտամբ և դուռը փակեց, վորպեսզի այսպիսով
ինձ վարժեցնի փոթորկի ժամանակ չվախենալ:

Հասկանալի յե, վոր ինձ համար անախորժ եր
հյուրասիրվել այսպիսի տանտիրոջ մոտ և յես
քիչ յերկյուղ չեյի կրում, բայց, կրկնում եմ, այն
ժամանակ յես հինգ տարեկան եյի, և իմ ցան-
կությունը հաշվի չեյին առնում:

II.

Փեսայիս կալվածքում կար մի հսկայական
քարաշեն տուն, վոր նման եր դղյակի: Սա մի
ծիծաղաշարժ, բայց տգեղ ու նույնիսկ անճոռնի
յերկհարկանի շենք եր կլոր գմբեթով ու աշտա-
րակով, վորի մասին սարսափելի բաներ եյին
պատմում: Այստեղ մի ժամանակ ապրել ե այժմ-
յան կալվածատիրոջ խելագար հայրը, հետո, նրա
սենյակներում դեղատուն են հիմնել: Այս յերե-
վույթն եր, չգիտես ինչու սարսափելի բան եր
համարվում, բայց ամենասարսափելին այն եր,
վոր աշտարակի վերևում, դատարկ ծուռ պատու-
հանի մեջ լարեր եյին ամբացված, այսինքն շին-
ված եր այսպես կոչված «Եռյան տավիղ»: Յերբ
քամին անցնում եր այս ինքնազլուխ գործիքի
միջով, լարերն անսպասելի ու տարորինակ ձայ-

Ներ Եյին հանում՝ սկզբում մեղմ շաշյուն, ապա

գի՞ն դղրդյուն։ Տանը վոչ վոք չեր սիրում այս
տավիղը և կարծում Եյին, թե նա ինչ-վոր բան
ե ասում ահեղ պարոնին, իսկ նա չի համարձակ-
վում առարկել նրան, այս պատճառով ել դառ-
նում ե ավելի անգութ ու դաժան... Մարդիկ
նկատել Եյին անկասկած, վոր յեթե գիշերը փո-
թորիկ ե բարձրանում, և աշտարակի տավիղն
այնպես ե հնչում, վոր ձայնը լճակների ու պար-
տեղների վրայով հասնում ե գյուղին, ապա աղան
գիշերները չի ընում, առավոտյան վեր ե կենում
մոռայլ ու կատաղի և այնպիսի դաժան հրաման
ե արձակում, վոր դող ե առաջացնում իր բազ-
մաթիվ ճորտերի սրտում։

Տան սովորություններն այնպես Եյին, վոր
այնտեղ յերբեք և վոչ մեկի համար ներում գո-
յություն չուներ։ Այդ մի որենք եր, վորը յերբեք
չեր փոփոխվում վոչ միայն մարդու համար, այլև
նույնիսկ գազանի կամ վորևէ փոքրիկ կենդանու
համար։ Փեսաս գութ չուներ և չեր սիրում գթա-
սիրուներին, վորովնեաւ դա համարում եր թու-
լություն։ Անշեղ խստությունը նրա համար ամեն
մի ներողամտությունից բարձր եր։ Այս եր պատ-

ճառը, վոր տանը և այս հարուստ կալված ատի-
րոջ պատկանող բոլոր ընդարձակ գյուղերում
թագավորում եր անմիտիթալ վհատությունը, վոր
մարդկանց հետ միասին կրում Եյին նաև գա-
ղանները։

III.

Հանգուցյալ փեսաս շներով վորո անելու կըր-
քում սիրահար եր։ Նա ձի հեծած դաշտ եր գուրս
գալիս բարակների հետ և հետապնդում գայլերին,
նապատակներին ու աղվեսներին։ Բացի սրանից,
նա ուներ հատուկ շներ, վորոնք արջ Եյին վոր-
սում։ Այս շները կոչվում եյին «տղրուկներ»։
Նրանք իրենց ժանիքներն այնպես Եյին խրում
գաղանի մարմնի մեջ, վոր նրանց չեր կարելի
գաղանից բաժաններ Պատահում եր, վոր տղրուկի
բռնած արջը նրան սպանում եր իր սարսափելի
թաթի մի հարգածով կամ նրան յերկու կես եր
անում, բայց յերբեք չի պատահել, վոր տղրուկը
կենդանի մնացած հետ քաշվի գաղանից։

Հետագայում, յերբ արջերին սկսեցին վորսալ
միայն շուրջկախներով կամ տեգերով, տղրուկ շների
ցեղը կարծեմ ամբողջավին վերացավ Ռուսաս-
տանում։ Բայց այն ժամանակ, վորի մասին յես

Ներ Եյին հանում՝ սկզբում մեղմ շաջուն, ապա
անհանգիստ, աններդաշնակ հեծեծանք ու մոլե-
գին դղրդյուն։ Տանը վոչ վոք չեր սիրում այս
տավիղը և կարծում Եյին, թե նա ինչ-վոր բան
ե ասում ահեղ պարոնին, իսկ նա չի համարձակ-
վում առարկել նրան, այս պատճառով ել դառ-
նում ե ավելի անգութ ու դաժան... Մարդիկ
նկատել Եյին անկասկած, վոր յեթե գիշերը փո-
թորիկ ե բարձրանում, և աշաբակի տավիղն
այնպիս ե հնչում, վոր ձայնը լճակների ու պար-
տեղների վրայով հանում ե գյուղին, ապա աղան
գիշերները չի քնում, տռավոտյան վեր ե կենում
մոայլ ու կատաղի և այնպիսի դաժան հրաման
և արձակում, վոր դող ե առաջացնում իր բազ-
մաթիվ ճորտերի սրտում։

Տան սովորություններն այնպիս եյին, վոր
այնտեղ յերբեք և վոչ մեկի համար ներում գո-
յություն չուներ։ Այդ մի որենք եր, վորը յերբեք
չեր փոփոխվում վոչ միայն մարդու համար, այլև
նույնիսկ գաղանի կամ վորևե փոքրիկ կենդանու
համար։ Փեսաս գութ չուներ և չեր սիրում գթա-
սիրտներին, վորովհետեւ դա համարում եր թու-
լություն։ Անշեղ խստությունը նրա համար ամեն
մի ներողամտությունից բարձր եր։ Այս եր պատ-

ճառը, վոր տանը և այս հարուստ կալվածատի-
րոջ պատկանող բոլոր ընդարձակ գյուղերում
թագավորում եր անմիսիթար վհատությունը, վոր
մարդկանց հետ միասին կըում Եյին նաև գա-
զանները։

III.


Հանգուցյալ վիեսաս ջներով վորո անելու կըր-
քում սիրահար եր։ Նա ձի հեծած դաշտ եր դուքս
գալիս բարակների հետ և հետապնդում գայլերին,
նապաստակներին ու աղվեսներին։ Բացի սրանից,
նա ուներ հատուկ ջներ, վորոնք արջ Եյին վոր-
սում։ Այս ջները կոչվում եյին «տղրուկներ»։
Նրանք իրենց ժանիքներն այնպիս եյին խրում
գազանի մարմնի մեջ, վոր նրանց չեր կարելի
գազանից բաժանել։ Պատահում եր, վոր տղրուկի
բռնած արջը նրան սպանում եր իր սարսափելի
թաթի մի հարվածով կամ նրան յերկու կես եր
անում, բայց յերբեք չի պատահել, վոր տղրուկը
կենդանի մնացած հետ քաշվի գազանից։

Հետագայում, յերբ արջերին սկսեցին վորսալ
միայն շուրջկաներով կամ տեղերով, տղրուկ ջների
ցեղը կարծեմ ամբողջովին վերացավ Ծուսա-
տանում։ Բայց այն ժամանակ, վորի մասին յես

պատմում եմ, նրանք լինում եյին ամեն մի լավ
կազմակերպված մեծ վորսի ժամանակ: Այս ժա-
մանակ ել մեր վայրերում արջեր շատ կային, և
նրանց վորսալը մեծ հաճույք եր պատճառում:

Յերբ գրավում եյին մի ամբողջ արջաբուն,
ապա վորջից դուրս եյին հանում արջի քոթոթ-
ներին և տուն բերում: Նրանց սովորաբար պահում
եյին բարաշեն մեծ ցախատան մեջ, վորը մանր
լուսամուտներ ուներ՝ շինված ուղղակի տանիքի
տակին: Այս լուսամուտներն ապակիներ չունեյին,
այլ միայն յերկաթե հաստ ձողեր: Արջուկները
յերեմն մեկը մյուսի յետեկից մակլցում համուռմ
եյին դրանց և իրենց կպչուն, ճիրանավոր թա-
թերով կախ ընկնում յերկաթներից: Միայն այս
գեպըում եյին նրանք կարողանում իրենց բան-
տից նայել դուրսը, ազատ աշխարհին:

Յերբ մեզ ճաշից առաջ դուրս եյին բերում
զբոսնելու, մենք ամենից շատ սիրում եյինք գնալ
ցախատան մոտ և դիտել արջուկների՝ ձողերի
արանքից դուրս ցցված մոռւթներին: Տնային
դաստիարակ գերմանացի Կոլբերգը կարողանում
եր փայտի ծայրին հաց դնել, վորը մենք վերց-
նում եյինք նախաճաշի ժամանակ և հասցնել
արջուկներին:



Արջուկներին՝ խնամում և կերակրում եր նրանց յերիտասարդ շնամարզիչ մերապնալը։ Գյուղացիները դժվարությամբ եյին այս անունն արտասանում, ուստի նրան կանչում եյին «Խրապոն» կամ ավելի հաճախ՝ «Խրապոշկա»։ Յես նրան շատ լավ եմ հիշում։ Խրապոշկան միջահասակ, քսան տարեկան յերիտասարդ եր, շատ ճարպիկ, ուժեղ ու համարձակ։ Խրապոնը գեղեցիկ տղամարդ եր համարվում։ Նա ոսկիտակ եր, կարմրաթուշ, սև գանգուր մազերով և սև դուրս ցցված մեծ աչքերով։ Սրա հետ միասին նա արտասովոր չափով համարձակ յերիտասարդ եր։ Նա մի քույր ուներ Աննուշկա անունով, վորը դայակություն եր անում, և նա չափազանց գրավիչ բաներ եր պատմում մեզ իր՝ լինզախ յեղբոր համարձակության ու արջերի հետ ունեցած նրա անորինակ բարեկամության մասին, վորոնց հետ նա ամառածեռ միասին եր քնում ցախատանը, այնպես վոր նրանք շրջապատում եյին իրեն ամեն կողմից և գլուխները դնում նրա վրա, ինչպես բարձի։

Փեսայիս տան առջև, ընդարձակ կլոր ծաղկանոցի հետեւ, վոր շրջափակված եր նախշած ցանկապատով, լայն դուռ եր բացվում, իսկ դուռն հետեւ, մարդաթմբի մեջտեղում տնկված եր

բարձր, ուղղաձիգ, հարթ ու վողորկ սյուն, վոր կոչվում եր «մաչտա»։ Մաչտայի գլխին ամրացված եր մի փոքրիկ հարթակ, կամ, ինչպես նրան անվանում եյին՝ «տաղավար»։

Գերված արջուկներից միշտ ընտրում եյին մի «խելոքի», վորն իր բնավորությամբ ամենից հասկացողն եր ու հուսալին։ Սրան առանձնացնում եյին մյուս յեղբայրակիցներից, և սա ապրում եր աղատ, այսինքն նրան թույլատրվում եր շրջել բակում ու պարտեզում, բայց նա գլխավորապես, պարտավոր եր դուռն առաջ, սյունի մոտ պահակություն անել Հենց այստեղ ել նա անց եր կացնում իր ժամանակի մեծ մասը, կամ հարդի վրա պառկած ուղիղ մաշտայի տակ, կամ թե չե նրանով բարձրանում եր մինչև տաղավարը և այստեղ նստում կամ ելի քնում, վորպեսզի նրան չձանձրացնեն վոչ մարդիկ, վոչ ել շները։

Ամեն մի արջի չեր թույլատրվում այսպես աղատ ապրել, այլ միայն մի քանիսին, առանձնապես խելոք ու հնազանդ արջերին, և այն ել վոչ թե իրենց ամբողջ կյանքի ընթացքում, այլ մինչև այն ժամանակ, քանի դեռ նրանք չեյին ամակսում յերեան բերել իրենց գաղանային համակառում

կեցության մեջ անհարմար հատկությունները, այսինքն քանի դեռ նրանք իրենց հանդարտ ելին պահում և չելին դիմում վոչ հավերին, վոչ սագերին, վոչ հորթերին, վոչ ել մարդկանց:

Բնակիչների անդորրը խանդարող արջն իսկույն մահվան եր գատապարտվում, և այս դատավճուց վոչ մի բան չեր կարող նրան ազատել:

IV.

«Հասկացող արջ» ընտրելը Խրապոնի գործն եր: Քանի վոր նա ամենից շատ եր շփվում արջուկների հետ և համարվում եր նրանց ընավորությանը քաջահմուտ մարդ, ապա հասկանալի յե, վոր այս բանը մենակ նա կարող եր անել: Խրապոնն ինքը պատասխանատու յեր իր վատ ընտրության համար,—բայց նա հենց առաջին անգամ այս գերի համար ընտրեց զարմանալի ընդունակ ու խելոք արջ, վորին արտասովոր անուն տրվեց. Ըուսաստանում արջերին առհասարակ կանչում են «Միշկա», իսկ այս մեկը կրում եր իսպանական «Սգանարել» մականունը: Նա արդեն հինգ տարի ապրում եր ազատորեն և դեռևս վոչ մի «չարություն» չեր արել: Յերբ արջի մասին ասում ելին, թե «նա չարություն

ե անում», այս նշանակում եր, վոր նա վորեկ հարձակումով արտահայտել ե իր գազանային գնավորությունը:

Այդ դեպքում «չարաճճի» արջին մի առ ժամանակ գցում ելին «փոսը», վոր շինված եր կալի ու անտառի միջև ընկած ընդարձակ բացողում, իսկ վորոշ ժամանակ հետո նրան հանում ելին և նույն տեղում նրան հետապնդում «ջահել բարեկներով» (այսինքն՝ արջաների մեծացած լակոտներով): Իսկ յեթե շան լակոտները չելին կակոտներով): Իսկ յեթե շան լակոտները չելին կար, վոր նարողանում նրան բռնել և վասնգ կար, վոր նա կիալսի անտառ, ապա այն ժամանակ «դարան» մտած յերկու լավագույն վորսորդներ հարձակմատած յերկու լավագույն վորսորդներ հարձակմատած ելին նրա վրա ընտիր ու փորձված վոհմակներով, և հաշիվը փակվում եր:

Իսկ յեթե շներն այնքան վարժ չելին լինում, վոր արջը կարողանում եր մտնել «կղզին» (այսինքն անտառը), վոր միանում եր Բըյանսկի նահանգի ընդարձակ տարածության հետ, ապա այդ ժամանակ մի հատուկ հրացանաձիդ շտուցեր հրացանով խեչմարի վրայից կրակելով՝ մահառիթ գնդակ եր հասցնում արջի յետելից:


Դեռ յերբեք չեր պատահել, վոր արջը դուրս պրծնի այս բոլոր վտանգներից, և նույնիսկ

սարսափելի յեր այս մասին մտածելը. այն ժամանակ մեղավորներին սպասում եյին մահաբեր պատիժներ:

V.

Սգանարելի խելքության ու համերաշխառւթյան հետևանքով նկարագրված զգարձաւթյունը կամ արջի պատիժը արդեն ամբողջ հինգ տարի յեր, ինչ տեղի չեր ունենում: Սգանարելն աճեց ու դարձավ մեծ հաղթանգամ արջ, արտասավոր ուժով, գեղեցկությամբ ու ճարպիկությամբ: Նա աչքի յեր ընկնում իր կլոր, կարճ մոռութով ու բավական բարդ կամփածքով, վորի շնորհիվ ավելի շուտ հիշեցնում եր մի վիթխարի առանգելական գաղան, քան թե արջ՝ նրա գավակը չոր եր և ծածկված փայլուն բրդով, բայց ուսերն ու մեջքի առջեի մասը խիստ զարգացած եյին և պատած յերկարամազ բրդով: Սգանարելը նաև խելոք եր, ինչպես պուդել շները և զիտեր այդ ցեղի գաղանների համար նշանավոր միքանի սովորություններ: Որինակ, նա շատ լավ ու հեշտությամբ կարողանում եր քայլել հետեւի յերկութաթերի վրա, թմբուկ եր զարկում, քայլում եր զինվորի նման՝ հրացանաձև ներկած փայտը ու-

սին, ինչպես և սիրով ու նույնիսկ մեծ բավա-
կանությամբ զյուղացիների հետ միասին ամենա-
ծանր ջվարները կրում եր ջրաղաց և յուրահա-
տուկ ձեռվ ու չափազանց ծիծաղելի կերպով
գլուխը ճածկում եր տղամարդու մեծ ու սրագա-
գաթ զլիսարկով, վրան ամբացրած ջայլամի փե-
տուր կամ հարդի փունջ:



Բայց վրա հասավ ճակատագրական որը, և
գաղանական բնավորությունը հաղթեց նաև Սգա-
նարելին։ Իմ գնալուց մի քանի որ առաջ հան-
դարտ Սգանարելը միանգամից միքանի մեղք ե-
դործում մեկը մյուսից ծանը ու դատապարտելի։

Սգանարելի հանցապարտ գործողությունների
ծրագիրը միևնույն եր, ինչ և մասն եղաղցուն-



ըինը, առաջին վարժության համար նա պոկել եր սագի թեր, ասլա թաթը դրել եր մոր հետեւ վից վազող քուռակի մեջքին և մեջքը ջարդել, վերջապես նրան գուր չելին յեկել կույր ծերուկն ու նրա ուղեկիցը, և Սգանարելը սկսել եր թավալել նրանց ձյան մեջ, տրորելով նրանց ձեռքերն ու վրաքերը:

Կույրին ու նրա ուղեկցին տարան հիվանդանոց, իսկ Սգանարելի համար հրամայեցին Խրապոնին տանել և գցել փոսը, վորտեղից միայն մի յելք կար՝ մահապատիժը...

Աննան յերեկոյան իմ ու մորաքրոջս իմ չափ փոքրիկ տղայի շորերը հանելիս պատմում եր, վոր Սգանարելին փոսը՝ տանելիս, վորտեղ նա պետք եւ սղասեր իր մահապատիժին, շատ սրտառուչ բաներ են տեղի ունեցել: Խրապոնը չի բաշքել Սգանարելին ու վորեւ ցավ չի պատճառել, նրա վրա վորհե բռնություն չի գործադրել, այլ միայն ասել ե.

-- Գաղանիկ, յեկ ինձ հետ:

Արջը վեր եւ կացել ու գնացել, բայց, վոր ավելի ծիծաղելի յեւ վերցրել եւ իր հարդափնջով գլխարկը և ամբողջ ճանապարհը մինչև փոսը Խրապոնի հետ գնացել եւ գրկախառնված:

VI.

Խրապոնը շատ եր խղճում Սգանարելին, բայց վոչ մի բանով ոգնել չեր կարող: Յես հիշեցնում եմ ձեզ, վոր այստեղ, վորտեղ այս բանը կատարվեց, յերբեք և վոչ մեկին իր մեղքը չելին ներում, և հանցավոր Սգանարելն իր կատարած զվարճության համար անպայման պետք եւ հատուցեր վայրագ մահով:

Նրա հետապնդումը նշանակվեց իբրև հետճաշյա զվարճություն ծննդին փեսիս մոտ յեկած հյուրերի համար: Վորսի հրամանն արդեն արված էր հենց այս ժամանակ, յերբ Խրապոնին կարգադրված եր մեղավոր Սգանարելին գցել փոսը:

VII.

Արջերին փոսը գցելու մեջ առանձին հնարամտություն չկար: Փոսի բերանը սովորաբար ծածկում եյին բարակ ձողերով ու ցախով և վրան ձյուն շաղ տալիս: Սա այնպիսի վարպետությամբ եր արվում, վոր արջը չեր կարող նկատել իր համար պատրաստված դավադիր թակարդը: Հնաղանդ գաղանին մոտեցնում եյին զրան և ստիպում առաջ գնալու նա մեկ յերկու քայլ եր անում և հանկարծ ընկնում խոր փոսը,

վորտեղից դուրս գալու վոչ մի հնաբավորություն չկար: Այստեղ արջը նստում եր այնքան ժամանակ, մինչեւ վոր հասներ նրան հետապնդելու որը: Այն ժամանակ փոսի մեջ իջեցնում եյին մոտ յոթ արշին յերկարությամբ թեք դրած մի գերան, և արջը գերանի վրայով դուրս եր գալիս փոսից: Այնուհետև ոկսվում եր հետապնդումը, իսկ յեթե պատահում եր, վոր հասկացող դադար, նախազգալով աղետը, չեր ուղում դուրս գալ, ապա նրան ստիպում եյին դուրս գալ՝ անհանգստացնելով, նրան յերկաթե ծայրեր ունեցող փայտե ձողերով, այրվող հարդ եյին դցում փոսը կամ նրա վրա հրացաններով ու ատրճանակներով դատարկ փամփուշներ եյին կրակում:

Խրապոնը Սգանարելին տարել եր և պահանջվող ձեռվ բանտարկել փոսի մեջ, բայց ինքը տուն եր վերադարձել շատ հուզված ու ախուր: Նա պատմել եր իր քրոջը, թե ինչպես «փաղաքշանքով» եր գնում իր հետ գաղանը և թե ինչպես արջը փոսն ընկնելով, նստել ե այնտեղ և, առջենի թաթերը ձեռքերի նման ծալած ոկսել հառաջանքը, կարծես թե լաց եր յեղեր:

Խրապոնը Աննային գաղտնի պատմել եր, վոր նա փոսի մոտից արագ փախել ե, վորպեսզի չլսի

Սգանարելի մղկտոցը, վորովհետև դա տանջում եր նրան և անտանելի յեր նրա համար:

— Լավ ե, — ավելացրել եր նա, — վոր ինձ չեն հրամայել փախչելու ժամանակ նրա վրա կրակել, այլ ուրիշներին: Իսկ յեթե ինձ հրամայվեր, ապա ավելի լավ կլիներ, վոր յես ամեն մի տանջանք կրեյի, բայց նրա վրա չկրակեյի:

VIII.

Աննան այս բանը պատմեց մեզ, իսկ մենք պատմեցինք Կոլբերգին: Նա յել, ցանկանալով վորեե բանով զբաղեցնել փեսայիս, նրան պատմեց: Նա լսեց այս բանը և ասաց:

— Կեցցես Խրապոշկա, — և հետո յերեք անգամ ծափ տվեց:

Այս նշանակում եր, վոր փեսաս իր մոտ և կանչում իր սպասավոր Ռւստիվիչին, վորը մի ծերուկ եր 1812 թվին Ռուսաստանում մնացած Ֆրանսիայի գերիներից:

Ռւստին Պետրովիչը, կամ Փուստինը, ներկայացավ մաքուր, կարմրակապույտ և արծաթե կոճակներ ունեցող ֆրակով, և փեսաս նրան հրամայեց, վոր Սգանարելի վաղվա վորովին դարձաներից կրակողներ նշանակվեն հայտնի հրացա-

նաձիգ Ֆլեգոնաը, զոր մշտապես կըակում եր
անվրեպ, և Խրապոշկան: Ակներե ե, զոր փեսաս
ուզում եր զվարճանալ խեղճ տղայի զգացմունք-
ների դժվարին պայքարից: Իսկ յեթե նա չկրա-
կեր Սգանարելի վրա, կամ դիտմամբ վրիպեր,
այդ, իհարկե, նրա վրա ծանր պիտի նստեր, իսկ
յերկրորդ զարկով Սգանարելին կոպաներ ֆլե-
գոնաը, վորի գնդակը յերբեք չի վրիպում:

Ուստինը գլուխը խոնարհեց և հեռացավ հրա-
մանը հաղորդելու, իսկ մենք՝ յերեխաներս, մտա-
ծում եյինք, թե մենք ենք այս դժբախտության
պատճառը, և զոր այս ամբողջ պատմության մեջ
կա մի ինչ վոր սարսափելի ծանր բան, ու այժմ
հայտնի չե, թե նա ինչով կվերջանաւ Սրանից
հետո մեզ չեյին գրափում վոչ ծննդյան համեղ
ընթրիքը, վոր կատարվում եր ճաշի հետ միա-
տեղ, վոչ ել զիշերելու յեկած հյուրերը, վորոն-
ցից մեքանիսի հետ կային նաև յերեխաներ:

Մենք խղճում եյինք Սգանարելին, խղճում
եյինք նաև Ֆերապոնտին, և մենք նույնիսկ
չեյինք կարողանում մեզ հաշիվ տալ, թե այս
յերկուսից վորին ենք ամենից ավելի խղճում:

Մենք յերկուսով ել, այսինքն՝ յես ու մորա-
բբոջս ինձ հասակակից տղան յերկար ժամանակ

շուռ ու մուռ եյինք դալիս մեր անկողին-
ներում:

Յերկուսիս քունն ել ուշ տարավ, մենք
վատ քնեցինք և քնի մեջ յերբեմն աղաղակում
եյինք, վորովհետեւ յերկսիս ել պատկերանում
եր արջը, իսկ յերբ դայակը մեզ հանգստացնում
եր, թե արջից այլիս չպետք ե վախենալ, վո-
րովհետեւ նա այժմ փոսի մեջ ե, իսկ վաղը նրան
սպանելու յեն, ապա յես ավելի շատ եյի ան-
հանգստանում:

IX.

Արդեն Ծննդյան որն եր ձաշից անմիջապես
հետո պետք եր գնալ Սգանարելին հետապնդե-
լու: Դանդաղել չեր կարելի, վորովհետեւ այդ որե-
րին շուտ ե մթնում, իսկ մթության մեջ անկա-
րելի յե հետապնդել և արջը հեշտությամբ կա-
րող ե անհայտանալ:

Ամեն ինչ կատարվեց այնպես, ինչպես վոր
նշանակված եր: Մեզ հենց սեղանի մոտից տա-
րան հազցնելու, վորպեսզի գնանք վորսի վայրը:
Մեզ հազցը եցին նապաստակի մորթուց կաբած
մուշտակներ և բրդոտ, այծի մորթուց կարած,
կլոր ներբան ունեցող յերկարածիտ կոշիկներ

ու տարան սահնակների մոտ Դոների առջև այս
ու այն կողմում արդեն կանգնած եյին յերեք
ձիանի բազմաթիվ յերկարավուն մեծ սահնակ-
ներ, պատաժ գույնզգույն գորգերով, և դրանց
մոտ յերկու սանձապահ կանգնած եյին փեսայիս
անզլիական դեղնավուն ձիու կողքին, սանձը ձեռք-
ներին:

Փեսաս դուրս յեկավ հագած, աղվեսի մոր-
թուց կարած արխալուզ և նույնպիսի սրագագայթ
զլսարկ, և հենց վոր նա նստեց սև արջի մոր-
թով պատաժ և փիրուդներով ճոխ զարդարված
թամբի վրա, մեր ամբողջ հսկայական գնացքը
տեղից շարժվեց: Տաս թե տամնը հինգ ըոպեյում
մենք արդեն հասանք վորսի վայրը և կիսաշրջան
կազմեցինք: Բոլոր սահնակները դասավորեցինք
կիսաթեք զիբքով դեպի ընդարձակ, հարթ, ձյու-
նածածկ դաշտը, վոր շրջապատված եր ձիավոր
վորարդների շղթայով, իսկ հեռվից՝ անտառով:

Հենց անտառի առջև շինված եյին թփերի
հետեւ տեղավորված դարաններ, և այնտեղ պիտի
լինեյին ֆլեգոնդն ու Խրապոշկան:

Այս դարանները չեյին յերևում, միայն մի
քանիսը քույց եյին աալիս այն հազիվ նշմա-
րելի խեչմարները, վորոնց վրայից հրաձիգնե-

րից մեկը նշան պիտի բռներ և կրակեր Սգա-
նարելի վրա:

Սրջի փոքր նույնպես չեր յերեռում, և մենք
ակամայից դիտում եյինք գեղեցիկ ձիավորներին,
վորոնք իրենց ուսերի վրա կրում եյին զանա-
զան սիրունիկ հրացաններ:

Փեսաս ձիով կանգնած եր շղթայից առաջ:
Նրա ձեռքը հանձնեցին յերկու կատաղի «տըզ-
րուկ» և նրա առջեր դրին մի սպիտակ թաշ-
կինակ:

Զահել շները, վորոնց փորձառություն ձեռք
բերելու համար մահվան եր դատապարտված մե-
ղապարտ Սգանարելը, հսկայական թիվ եյին կազ-
մում և բոլորն ել շատ ինքնավստահ եյին պա-
հում իրենց, դրսեորելով իրենց կրակոտ անհամ-
բերությունն ու անզուսպ ընավորությունը:
Նրանք ճշում եյին, հաջում, վեր ու վեր թռչում
ու խճճվում ձիերի շուրջը, վորոնց վրա նստած
եյին հատուկ տարագ հագած շնամարզիչները:
Սրանք անընդհատ շրխկացնում եյին վորսամտ-
րակներով, վորպեսզի հնագանդեցնեն անհամբե-
րությունից իրենց կորցրած ջահել շներին: Սրանք
քոլորը յեռում եյին մի ցանկությամբ՝ հարձակ-
վել գաղանի վրա, վորի մոտիկ լինելը շներն

իհարկե գիտեյին իրենց բնատուր սուր հոտառությամբ:

Հասավ Սգանարելին փոսից հանելու բողեն,
յերք նրան պետք եր հանձնել շներին հո-
շոտելու:

Փեսաս թափահարեց թումբի վրա դրված իր
սպիտակ թաշկինակը և ասաց՝ «սկսիր»:

X.

Փեսայիս գլխավոր շտաբը կազմող վորորդ-
ների խմբից առանձնացան մի տաս հոգի և
առաջացան դեպի դաշտը:

Յերկուհարյուր քայլ հեռանալով, նրանք կանգ
առան և ձյան տակից սկսեցին հանել յերկար,
վոչ շատ հաստ մի գերան, վորը մինչ այդ մենք
հեռվից չեյինք նկատում:

Այս բանը կատարվում եր հենց փոսի կող-
քին, վորտեղ նստած եր Սգանարելը, բայց մենք
հեռվից փոսն ել չեյինք տեսնում:

Փայտը բարձրացրին և իսկույն մի ծայրն
իջեցրին փոսի մեջ: Այնպիսի թեք դիրք տվին
փայտին, վոր գաղանն առանց դժվարության
կարող եր նրանով դուրս գալ ինչպես սան-
դուդով:



Գերանի մյուս ծայրը հենված եր փոսի կողին և մի արշինաչափ տնկված եր վեր:

Բոլորի աչքերը հառած եյին այս սկզբնական գործողության վրա, վոր մոտենում եր ամենահետաքրքրական լոպեյին: Սպասում եյին, վոր Սպանարելն իսկույն դուրս կտա, բայց նա ինարկե, հասկանում եր, թե ինչ ե կատարվում, և վոչ մի կերպ դուրս չեր դալիս:

Սկսեցին նրան փոսի մեջ հալածել ձնագնդերով ու սրածայր փայտերով, լովեց մոնչյուն, բայց դազանը փոսից դուրս չեր դալիս: Մի քանի դատարկ փամփուշներ կրակեցին նրա վրա, բայց Սպանարելը միայն ավելի զայրացած մոնչաց ու այնուամենայնիվ դուրս չեկավ:

Այն ժամանակ շղթայի միջից արագորեն դուրս յեկավ մի լծած հասարակ փայտակիր սայր վորի վրա դարսված եր չոր հարդ:

Հենց այն բարձրահասակ ու չոր տեսքով ձիերից եր, վորոնց բանեցնում եյին կալից կեր կրելու համար, բայց նա, չնայած իր նիհարությանն ու ծեր հասակին, թուչում եր պոչը տնկած ու բաշը բարձրացըրած: Սակայն դժվար եր վորոշել, թե նրա այս կայտառությունը նախկին արիության մնացորդն եր, թե ավելի շուտ

յերկյուղի ու հուսահատության արդյունք, վոր նա զգում եր արջի մոտիկությունից: Ըստ յերեւույթին, վերջինս ավելի հավանական եր, վորովհետև բացի յերկաթյա սանձերից նա սանձագած եր նաև պարանով, վորն արյունոտել եր նրա գունատ շրթունքներից: Նա առաջ եր սուրում և այս ու այն կողմ ընկնում այնպիսի մոլեգնությամբ, վոր նրան դեկավարող ձիապանը պարանով ձգում եր նրա գլուխը դեպի վեր և մյուս ձեռքով միևնույն ժամանակ անգթորեն քաշում նրա հաստ սանձը,

Բայց, ինչ ել վոր ե, հարդը բաժանվեց յերեք կույտի, միանգամից վառվեց և իսկույն, յերեք կողմից վառված շպրտվեց փոսը: Կրակը չեր գցված միայն այն կողմը, վորտեղ հենված եր գերանը:

Լսվեց խլացուցիչ, կատաղի մոնչյուն, խառնված հառաչանքի հետ, բայց... արջը դարձաւ չեր յերեսում:

Մեր շղթային լուր հասավ, վոր Սպանարելն ամբողջովին խանձվել ե, և վոր նա թաթերով աչքերը փակել ե և պինդ կուչ յեկել մի անաչքության մասին, վոր նրան տեղից շարժել չի կյունում այնպես, վոր նրան տեղից շարժել չի կինի:

Կտրտված շրթունքներով ձին դարձյալ վագելով հետ յեկավ... Բոլորը կարծում եյին, թէ նորից հարդ պիտի բերեն։ Հանդիսականները կշամքում եյին, թէ ինչու վորսի կարգադրիչներն առաջուց չեն մտածել այնքան հարդ պատրաստելու, վոր նա չպակսի։ Փեսաս բարկանում երու ինչ վոր բան ասում գոռալով, վորը յես չեյի կարողանում հասկանալ մարդկանց մեջ առաջացած իրարանցման և ների ել ավելի ուժեղացած ճիշերի ու մտրակների շրխկոցի պատճառով։

Բայց այս ամենի մեջ կար վորոշ ներդաշնակություն, և ձին դարձյալ սուրալով ու փնչացնելով հետ եր դառնում դեպի փոսը, բայց վոչ թե հարդով բարձած այլ այս անգամ սայլակի վրա նստած եր ֆերապոնտը։

Փեսայիս զայրացած կարգադրությունն այն եր, վոր Խրապոշկային իջեցնեն փոսը, վորպեսի նա ինքն այնտեղից դուրս բերի իր սիրելի ընկերոջը՝ հետապնդելու համար։

XI.

Յեվ ահա, ֆերապոնտը տեղ հասավ։ Նա շատ հուզված եր յերեսում, բայց գործում եր հաստատու վճռական։ Ամենին չհակառակելով աղայի

հրամանին, նա սայլակի վրայից վերցրեց այն պարանը, վորով կապված եր հարդը և այս պարանի մի ծայրը կապեց գերանի վերին ծայրից։ Պարանի մյուս ծայրը ձեռքին, ֆերապոնտը գերանի վրայով սկսեց իջնել փոսը։

Սգանարելի սարսափելի վոռնոցը դադարեց և փոխարինվեց խոռվ մրթմրթոցով։

Գաղանը կարծես թե գանգատվում եր իր մտերիմ ընկերոջը, վոր մարդիկ դաժան վարմունք են ցույց տալիս իրեն, բայց շուտով այս մրթմրթոցն ել փոխարինվեց կատարյալ լուսությամբ։

— Գրկում ե Խրապոշկային և լիզում, — բացականչեց փոսի գլխին կանգնած ծառաներից մեկը։

Սահմակների վրա տեղավորված մարդկանցից մի քանիսը ախ քաշեցին, մյուսները կնճռութեցին։

Շատերը խղճում եյին արջին, և նրան հետապնդելն, ակներեւ ե, վոր նրանց մեծ բավականություն չեր խոստանում։ Բայց նկարագրված վարկյանական տպավորությունները հանկարծ ընդհատվեցին մի նոր իրողությամբ, վորն ավելի անսպասելի յեր և մի նոր սրտառուչ տեսարան եր ներկայացնում։

Փոսի յերեսին, կարծես թե գժողքից դուրս
 յեկավ Խրապոշկայի գանգրահեր զլուխը վոր-
 սորդական կլոր զլխարկով: Նա բարձրանում եր
 այնպես, ինչպես իջնում եր, այսինքն գերանի
 վրայով վոտքերով վեր եր բարձրանում, դեպի
 իրեն ձգելով գերանի դրսի ծայրին կապ-
 ված պարանը: Բայց Ֆերապոնդը մենակ չեր.
 Նրա կողքին, նրան պինդ զրկած և մեծ բրդոտ
 թաթը նրա ուսին զրած դուրս եր գալիս նաև
 Սգանարելը... Արջի տրամադրությունն ընկած եր
 և լավ տպավորություն չեր գործում մեղ վրա:
 Տանջված և ուժասպառ լինելով վոչ այնքան
 մարմնական աառապանքից, վորքան նյարդային
 ծանր ցնցումից, նա շատ եր հիշեցնում արքա Լի-
 րին: Նրա ունքերի՝ տակից փայլում եյին արյամբ
 և ցասումով լցված աչքերը: Ինչպես Լիր արքան,
 նրա մազերը զզզզված եյին, տեղ-տեղ խանձված,
 իսկ տեղ-տեղ նրան կպել եյին հարդի կտորներ:
 Յեվ որա հետ միասին, ինչպես և այն դժբախտ
 թագակիրը, Սգանարելը զարմանալի պատահա-
 կանությամբ պահպանել եր նաև թագի նման մի-
 բան: Գուցե Ֆերապոնտին սիրելուց, իսկ գուցե
 և պատահաբար, նա թեկի տակ սեղմել եր Խրա-
 պոշկայի տված զլխարկը, վորով նա Սգանա-



բելին ակամա հրել եր և գցել փոսը։ Արջը պահել
եր այս բարեկամական պարզեր և... այժմ յերբ
նրա սիրաը մի ըռպի հանգստացել եր մտերիմ
ընկերոջ գրկում, նա հենց վոր կանգնեց գետնի
վրա, խսկույն կոնստանտին հանեց սաստիկ ջարդ
ված գլխարկը և զրեց կատարին...

Այս վարմունքը շատերի մեջ ծիծաղ հարու-
ցեց, խսկ մյուսների համար ցավալի տեսա-
րան եր։ Վոմանք նույնիսկ շտապեցին յերեաները
դարձնել գաղանից, վորին անմիջապես սպասում
եր ամենավատ վախճան։

XII.

Մինչև վոր տեղի կունենար արս ամենը,
չները վոռնացին և գես ու դեն ընկան, մոռա-
նալով ամեն մի հնագանդություն։ Նույնիսկ
մտրակն այլևս ազդեցություն չուներ նրանց
վրա։ Մանը չներն ու հին տպրուկները Սգանա-
րելին տեսնելով, բարձրացան յետեի վոտների
վրա և, խոպոտ ձայնով վոռնալով ու խոմիաց-
նելով, չնչակտուր եյին լինում իրենց դաբաղած
վզողերից։ Խսկ հենց այդ ժամանակ Խրապոշկան
նորից վաղեց դեպի անտառ՝ իր դարանը։ Սգա-
նարելը կրկին մնաց մենակ և անհամբեր թափա-

հարում եր իր թաթը, վորին պատահաբար կապ-
վել եր Խրապոշկայի գցած պարանը, վոր ամ-
րացված եր գերանին։ Գաղանն, ինչպես յերեսում
ե, ուզում եր շտապ քանդել պարանը կամ
կարել ու համել իր մտերիմ ընկերոջը, բայց
թեև նա խելոք արջ եր, նրա ճարպկությունն
այնուամենայնիվ արջալին ճարպկությունն եր, և
Սգանարելը վոչ թե բացեց պարանը, այլ ավելի
պինդ ամրացրեց իր թաթին։


Տեսնելով, վոր այնպես չի լինում, ինչպես
ինքն եր ուզում, Սգանարելը ձգեց պարանը,
վորպեսզի կարի, բայց պարանն ամուր պարան
եր և չկտրվեց, այլ դրա փոխարեն վեր բարձ-
րացավ և տնկվեց փոսի մեջ։ Նա հետ նայեց, խսկ
այդ ըռպելին վոհմակից բաց թողնված յերկու
տղրուկ հասան նրան, վորոնցից մեկն իր սուր
ատամները թաղեց նրա թիկուքի մեջ։

Սգանարելն այնքան եր զբաղված պարանով,
վոր այս նրա համար անսպասելի յեր և առաջին
ըռպելին նա, կարծես, վոչ այնքան բարկացավ,
վորքան զարմացավ արս լկտիությունից։ Բայց
հետո, կես ըռպէ անց, յերբ տղրուկն ուզեց
ատամներն ավելի խորը թաղել նրա մարմնի մեջ,
գաղանը թաթով պոկեց նրան իր մարմնից և փո-

բոտիքը պատռած շպրտեց շատ հեռու։ Մյուս
 շունն այդ նույն վարկյանին ճիշվեց նրա յետեի
 թաթի տակ... Բայց ամենից սարսափելին ու
 անսպասելին տեղի ունեցավ գերանի հետ։ Յերբ
 Սգանարելը թաթով ուժգին շարժում գործեց
 իրեն կապած տղորովին դեն շպրտելու համար,
 այդ նույն շարժումով նա փոսից դուրս հանեց
 պարանով պինդ կապած գերանը, և վերջինս վեր
 թռավ ողի մեջ։ Պարանը ձգելուց նա պտտվեց
 Սգանարելի շուրջը, իրեւ առանցքի, և, մյուս
 ծայրով ձյան վրա զիծ քաշելով առաջին իսկ
 պտուտին ճիշեց ու գետնին թողեց վոչ թե
 յերկու կամ յերեք շուն, այլ մի ամբողջ վոհմակ։
 Նրանցից միքանիսը ծվագին ու դանդաղ շար-
 ժումներ արին, իսկ մյուսներն ինչպես վոր թա-
 թալվեցին, այնպես ել ձգվեցին։

XIII.

Գագանը կամ շատ հասկացող եր, վոր զի-
 տակցում եր, թե ինչպիսի լով զենք դուրս յե-
 կավ գերանը, կամ նրա թկին կապած պարանը
 սաստիկ կտրում եր, բայց նա միայն մոնչաց և
 միանգամից, պարանն առնելով թաթի մեջ այն-
 պես քաշեց, վոր գերանը ձգվեց ու մի հորիզո-



Նական գիծ կազմեց պարանը ձգող թաթի հետ,
ապա այնպիսի շաջուն արձակեց, ինչպես սաս-
տիկ ձգված հսկայական հոլը: Ինչ վոր հանդիպեր
նրան, անպայման ջարդուփշուր պիտի լիներ:
Յեթե պարանը տեղ-տեղ թույլ լիներ և կտրվեր,
ապա թուած գերանն այսպես կտանար, վոր իր
թուիչքի ճամբին կխորտակեր ամեն կենդանի բան:

Մենք բոլորս՝ մարդիկ, ձիերն ու չները սար-
սափելի վտանգի մեջ եյինք և, իհարկե, ամեն
մեկն ուզում եր, վոր իր կյանքի անվտանգու-
թյան համար Սգանարելի թաթից կապված պա-
րանը չկտրվի: Բայց ինչով պիտի վերջանար այս
բոլորը: Սակայն վոչ վոք չցանկացավ սպասել
վախճանին, բացի միքանի վորսորդներից ու ան-
տառի մոտ գարան մտած յերկու հրացանաձիգ-
ներից: Մնացած բոլոր մարդիկ, այսինք բոլոր
հյուրերն ու տանեցիք, վոր յեկել եյին հանդեսի
վայրը զվարձանալու, վոչ մի զվարձություն
չեյին գտնում այլևս կատարված զեպքերի մեջ:
Բոլորը վախեցած հրամայեցին կառապաններին
վորքան կարելի յե շուտ հեռու քշել վտանգավոր
վայրից, և սարսափելի անկարգությամբ, մեկը
մյուսին հրելով ու առաջ անցնելով դիմեցին
դեպի տուն:

Ճանապարհին շտապ ու անկարգ փախուստի
ժամանակ տեղի ունեցան մի քանի ընդհարում-
ներ և ընկնելու գեպեր: Ծիծաղելու քիչ առիթ
կար, իսկ յերկյուղը պատել եր շատերին: Սահ-
նակներից ընկնողներին թվում եր, թե գերանը
պոկվել ե և շաշելով թուչում ե իրենց գլխի վրա-
յից, իսկ նրանց յետերից համառում ե կատաղած
գաղանը:

Տուն հասած հյուրերը հանգստացան, իսկ
այն փոքրաթիվ մարդիկ, վորոնք մնացել եյին
վորսի վայրում, շատ ավելի սարսափելի բաներ
եյին տեսել:

XIV.

Վոչ մի շուն չեր կարելի բաց թողնել Սգա-
նարելի վրա: Պարզ եր, վոր նա գերանով դին-
գած կարող եր առանց մի վորեւ վաս պատճ-
ռելու իրեն հաղթել ավելի ու ավելի մեծ քա-
նակությամբ ջների: Իսկ արջը պտտեցնելով իր
գերանը և ինքը նրա հետ պտույտներ գործելով,
ուղղակի մոտենում եր անտառին, և մահը նրան
հենց այսուղ եր սպասում, դարանի մոտ, վոր-
տեղ նստած եյին Ֆերալոնտը և անվրեալ կրա-
կող Ֆլեգոնտը:

Դիպուկ գնդակը միանգամից կարող եր ամեն
ինչի վերջ դնել:

Բայց բախտը զարմանալի կերպով հովանավորում եր Սգանարելին և, մի անգամ միջամտելով գաղանի գործին, կարծես թե ուզում եր ինչ ել վոր լինի փրկել նորան:



Հենց ճիշտ այն բողեյին, յերբ Սգանարելը հավասարվեց այն վայրերին, վորտեղից նրա վրա ուղղված եյին խեչմարների վրա զրված հրացանները, Սգանարելի վոտքից պարանն անսպասելիորեն կտրվեց և... աղեղից ձգված նետի պես ձախրեց մի կողմ, իսկ արջը, հավասարակշռու-

թյունը կորցնելով, ընկապ և գլուխեց մյուս
կողմբ:

Դաշտում ֆնացածների առջև հանկարծ բացվեց մի նոր ու սարսափելի տեսարան. գերանը ջարդուփշուր արեց խեչմարներն ու այն մացառները, վորոնց հետեւում թագնված եր Ֆլեգոնար, խոկ հետո թռչելով նրա վրայից, մյուս ծայրով խրվեց ձյան կույտի մեջ. Սպանարելը ժամանակ չկորցրեց: Յերեք, թե չորս անգամ զիմկոնծի տալով, նա ուղղակի ընկավ Խրապոշկայի ձյան թմբի հետեւ...

Սգանարելը վարկյանապես ճանաչեց նրան,
տաք բերնի շունչը դիպավ Խրապոշկայի յերե-
րեսին, ուզեց լիզել Խրապոշկային, բայց հան-
կարծ մյուս կողմից Ֆլեգոնտը կըակեց և... արջը
փախավ անտառ, իսկ Խրապոշկան... անզգայցած
ընկավ գետին:

Նրան վեր բարձրացըին և զննեցին. Նա վիրա-
վորված եր ձախ ձեռքից, վորի միջով գնդակը
դուրս եր յեկել բայց վերըի մեջ կային արջի
բրդի մնացորդներ:

Ֆլեգոնտը լավ նշան խփողի կոչումը չկոր-
ցրեց. նա կրակել եր աճապարելով, ծանր հրա-
ցանից և առանց խեչմարի, վորի վրայից նշան

են բոնում: Բացի սրանից, արդեն մթնում եր և ,
արջն ու Խրապոշկան շատ պինդ ելին կալած
իրար...

Այսպիսի պայմաններում այն կրակոցն ել,
վոր վրիպել եր միայն մի մազաչափ, իր տեսակի
մեջ պետք ե համարվեր սքանչելի նշանառում:

Սգանարելն, այնուամենայնիվ փախավ:

XV.

Այս անհաջող վարսից հետո փեսաս վերա-
դարձավ այնքան զայրացած ու դաժան, ինչպես
մենք նրան յերբեք չելին ոտեսել: Տան շեմքի
առջե դեռ ձիուց չիջած նա հրամայեց վազը դեռ
չլուսացած գտնել արջի հետքերը և նրան այն-
պես պաշարել, վոր նա չկարողանա փախչել:

Բոլորն սպասում ելին յերկըորդ կարգադրու-
թյանը՝ վիրավոր Խրապոշկայի մասին, բայց կար-
գագրություն չեղափ: Փեսաս արագ անցավ իր
սենյակը:

Վոչ վոք չեր կասկածում, վոր Ֆերապոնտը
սարսափելի վիճակի պիտի համար: Ամենաքիչը
նա մեղավոր եր այն բանում, վոր յերբ Սգանա-
րելը հասավ նրա մոտ, նա վորսորդական գա-
նակը չիրեց նրա կուրծքը, մինչդեռ կատաղած

Սգանարելն իր գրկի մեջ ամենաչնչին իսկ վասա-
չպատճառեց Խրապոշկային:

Յեվ, բացի սրանից, կային խիստ և, կարծեմ,
միանգամայն հիմնավոր կասկածներ ել վոր
Խրապոշկան սատանայություն ե արել վոր նա
ճակատագրական բոպելին դիտավորյալ կերպով
չի ուղել ձեռք բարձրացնել իր բրդու ընկերոջ
վրա, այլ նրան թողել ե, վոր ազատվի:

Խրապոշկայի ու Սգանարելի բոլորին հայտնի
մտերմությունը շատ հավանական եր դարձնում
այս յենթագրությունը:

Այսպես ելին մտածում վոչ միայն վորսին
մասնակցողները, այլև յեկած հյուրերը:

XVI.

Յերեկոյան բոլորը հավաքվեցին մեծ դահ-
լիճը: Շշուկով ելին խոսում: Մի ընդհանուր ծանր
վհատություն եր զգացվում:

Մենք յերեխաներս նույնպես շնչում ելինք
կամացուկ, ամենասարսափելի յենթագրություն-
ներ անելով խեղճ Խրապոշկայի վիճակի մա-
սին:

Այս յերկյուղից մենք չելինք կարողանում
իսաղալ և կուչ յեկանք դահլիճի մի մութ ան-


Այունում, ոգտվելով այն բանից, վոր մեր վրա
վոչ վոք ուշադրություն չեր դարձնում:

Փեսաս չկար ու չկար: Ասում եյին, թե Խըա-
պոշկայի վերաբերյալ դեռ վոչ մի հրաման չի տվել:

Ընթրիքից քիչ առաջ դուռը վերջապես լայ-
նորեն բացվեց, և փեսաս ներս մտավ: Նրան ու-
ղեկցում եյին իր յերկու սիրելի բարակները և
կամերդիներ Ժյուստինը, վոր նրա հետևից ար-
ծաթե ափսեյի մեջ բերում եր նրա մետաքսե
սպիտակ թաշկինակն ու կլոր ծխատուփը Պավիլ /
թագավորի նկարով:

Նա լուռ ընկղմվեց իր խոր բազկաթոռի մեջ
և նույնպես լուռ՝ Ժյուստինից վերցրեց իր ծխա-
տուփը: Նրա փոտքերի առջև անմիջապես պառ-
կեցին յերկու շները և ձգեցին իրենց յերկար
մառլթները: Փեսաս հագել եր մետաքսե կապույտ
արխալուղ հարթ գործած կոճակողերով, զար-
դարված չափուաստներով ու մի մեծ վերուզով:
Նա ձեռքին ուներ կովկասյան կեռասենուց շի-
նած բարակ, բայց ամուր փայտ:

Փայտն այժմ նրան շատ եր պետք, վորովհետեւ
վորսի ժամանակ առաջացած իրարանցման մեջ իր
ձին նույնպես սկսում եր վախենալ, մի կողմից
մյուսն ընկնել և իր ձիավորին դեմ տալ ծառին:



Փեսաս խիստ ցավ եր զգում այս վոտքից և
նույնիսկ մի քիչ կաղում եր:

Հասկանալի յե, վոր այս նոր հանգամանքը
նույնպես չեր կարող վորեե լավ բան ավելացնել
նրա հուզված ու զայրացած սրտին:

Փեսաս յերեալուն պես բոլորն ակամայից
լոեցին:

— Այստեղ բերել ֆերապոնտին, — հստակ ար-
տասանեց փեսաս, նայելով ժյուստինի յերեսին:

Ժյուստին իսկույն դուրս յեկավ:

Մենք բոլորս լարված սպասում եյինք...

Բայց բոլորները անցնում եյին բոլեների
հետեւց, իսկ ծառան չկար ու չկար:

Ճնշող լոռւթյունը խեղդում եր բոլորին: Ինչ
վոր մեկը վախենալով փսփսում եր: Փեսաս չա-
րագուշակ լոռւթյունը խախտել ցանկանալով,
բարձրաձայն խնչեց:

Ինչպես մեծ մասամբ լինում են դաժան ու
կասկածամիտ մարդիկ, նա շրջապատողների լոռւ-
թյունը դանել չեր կարող:

Յեվ ահա, վերջապես, ժյուստինը ներս
մտավ...

Փեսաս, շրթունքները շարժելով, լոռո նայեց
նրա վրա:

— Ֆերապոնտը... չկա... վոչ մի տեղ նրան
չգտանք... — խոպոտ ձախով ասաց ժյուստինը:

— Այսինքն, ինչպես թե չկա, — աղաղակեց
փեսաս:

— Չկա, ամեն տեղ ման ենք յեկել... նրա
խցիկի լուսամուտը ջարդված ե... փախել ե...

Բոլորն իրար յերեսի նայեցին: Մենք՝ յերե-
խաներս քիչ մնաց, վոր ուրախությունից ձա-
յինք, բայց ժամանակին զսպեցինք մեզ և շնչա-
զուսպ նայեցինք փեսայիս:

— Փախավ... Սա յել փախավ...

Յեվ ծանր բարձրանալով բազկաթոռից, փե-
սաս, կաղալով դուրս յեկավ դահլիճից: Նրա գու-
նատ գեմքը զարհուրելի յեր:



ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

ԱՐՏ
ՏՐ. Օ

Н. ЛЕСКОВ

ЗВЕРЬ



ԱՐՄԵՆԳԻԶ - ԷՐԻՎԱՆԻ

«Ազգային գրադարան»



NL0383796

3459